

---

---

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՌՈՒՍԵՐԵՆԻ ԻՆՖԻԼԻՏԻՎԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻՆՅԱՆ

Հայերենի և ռուսերենի ինֆինիտիվները ծագումնաբանորեն տարբեր ցուցիչների են հանգում, սակայն տիպաբանական տեսանկյունից որոշակի ընդհանուր գծեր են ցուցաբերում թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա կտրվածքում:

Եթե հայերենի անորոշի կազմությունը հանգում է հ.-ե. \**lo* վերջածանցին, ապա ռուսերենի ինֆինիտիվինը՝ \**-ti*-ին: Հայերենի զարգացման նախորդ փուլերում ինֆինիտիվը հանդես է գալիս և՛ նախդրավոր, և՛ աննախդիր տարբերակներով, իսկ հին ռուսերենում կա միայն տրական հոլովի ձևը: Հայերենի և ռուսերենի ինֆինիտիվները հանգում են նաև տարբեր հիմքերի, հայերենը՝ ներկայի, իսկ ռուսերենը՝ աորիստի հիմքին: Սրանով էլ պայմանավորված է դրանց կիրառության տարբեր ոլորտները: Այսպես՝ հին հայերենի անորոշ դերբայը հանդես է եկել՝

1. Ի նախդիրի հետ՝ դրվելով հայցական հոլովով և ցույց տալով նպատակ ու ժամանակ.

Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել<sup>1</sup> (նպատակ):

Եւ ի տալ Ջրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և օրինել զնա...<sup>2</sup> (ժամանակ):

2. Առանց ի նախդիրի, նպատակի պարագայի դերում, օրինակ՝

Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զօրաց իւրոց, տեսանել զթիւ կենադանեացն և մեռելոց...<sup>3</sup>

3. Այնպիսի կառույցներում, ինչպիսիք են՝ անորոշը հայցական, տրական և սեռական հոլովներով ենթակայի հետ: Օրինակ՝

...կարծեցեալ զդիսն հասանել նմա յաւզնականութիւն<sup>4</sup> (անորոշը հայցականի հետ):

...այլ նմա պարտ էր հարկանել զայն ապաստաւորութիւնն<sup>5</sup> (անորոշը տրականի հետ):

4. Նախդրավոր և աննախդիր կառույցների հետ տարբեր հոլովաձևերում: Օրինակ՝

Այլ վասն համառօտելոյ զճառս՝ բաւական լիցի ասացեալս վասն նորա<sup>6</sup>

---

<sup>1</sup> Եղիշէ. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 73:

<sup>2</sup> Եզնիկ Կոդբագի. Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 80:

<sup>3</sup> Ա. Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևնարկ, Երևան, 1964, էջ 364:

<sup>4</sup> Եղիշէ. նշվ. աշխ., էջ 83:

<sup>5</sup> Եզնիկ Կոդբագի. նշվ. աշխ., էջ 127:

<sup>6</sup> Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 10:

(սեռական հոլով):

...համարձակ պատուելով Շամիրամայ գախտն՝ առաքե՛ հրեշտակս առ Արայն զեղեցիկ...<sup>7</sup> (գործիական հոլովով):

Հայերենի նախդրավոր և աննախդիր անորոշի հակադրությանը ռուսերենում համապատասխանում է ինֆինիտիվ – սուպին հակադրությունը, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ և՛ նախդրավոր ինֆինիտիվը հայերենում, և՛ սովորական ինֆինիտիվը ռուսերենում ունեն հանգման, տրականի իմաստ: Իսկ աննախդիր ինֆինիտիվն ու սուպինը հանդես են գալիս շարժման բայերի հետ՝ նպատակի իմաստ արտահայտելու համար:

Սուպինի կապը ինֆինիտիվի հետ նկատել է նաև Ֆ. Բուսլանը՝ այն համարելով ինֆինիտիվի մի տեսակ<sup>8</sup>: Սուպինը գործածվում է միայն շարժում ցույց տվող անկատար բայերի, նաև *хотеть* բայի հետ, քանի որ հանդես է գալիս որպես ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր շարժում ցույց տվող բայերի լրացում<sup>9</sup>: Այն ծագումնաբանորեն հին *у* հիմքի եզակի թվի հայցական հոլովի ձևն է, որը հանդես է գալիս *-там -ից սերված -ть* վերջավորությամբ: Արդեն XI դարից սուպինը դուրս է մղվում լեզվից և փոխարինվում համապատասխան ինֆինիտիվի ձևերով<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է անորոշը հայցականով, տրականով և սեռականով կառույցներին, ապա հին ռուսերենում սեռականով կառույցները բացակայում են, դրա փոխարեն առկա են ուղղականով կառույցներ: Սակայն եթե անորոշը տրականով կառույցը բնորոշ է ռուսերենին, ապա նույնը չի կարելի ասել *AcI* և *NcI* կառույցների մասին: Բանն այն է, որ չնայած հունարենի մեծ ազդեցությանը՝ հունարենից հին սլավոներեն թարգմանություններում էլ ինֆինիտիվը հայցականի հետ կառույցները սահմանափակ գործածություն ունեին<sup>11</sup>:

Ռուսերենի ինֆինիտիվը, ի տարբերություն հայերենի անորոշի, այլևս չի հոլովվել: Նրա ցուցիչը *-ti-* ն է, որը, ի տարբերություն ժամանակակից ռուսերենի, պահպանել է իր ձևը և՛ շեշտված, և՛ անշեշտ դիրքում (*нести - знати*): *-ti* – ի փոխարեն *որոշ* բայեր, որոնք իրենց ինֆինիտիվը կազմում են ներկայի հիմքով և որոնց ներկա ժամանակի հիմքն ավարտվում է տոնաքմային *k, g* – ով, ստացել են *- čī*<sup>12</sup>:

Ինչպես նկատում է Վ. Բվանովը, ռուսերենի ինֆինիտիվը իր ծագմամբ նույնպես անվանական ձև է: Այն գոյականացված բայի *-ī* հոլովմամբ հոլովված տրական-ներգոյական ձևի քարացած վիճակն է<sup>13</sup>:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>8</sup> Ф. И. Бусланов. Историческая грамматика русского языка. М., 1959, с. 115.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 376:

<sup>10</sup> В. В. Иванов. Историческая грамматика русского языка. М., 1964, с. 401.

<sup>11</sup> *Հմտ.* М. А. Габинский. Появление и утрата первичного албанского инфинитива. Л., 1970, с. 189.

<sup>12</sup> П. С. Кузнецов. Историческая грамматика русского языка (морфология). М., 1953, с. 203.

<sup>13</sup> В. В. Иванов. *Նշվ. աշխ.*, էջ 376:

Ուշագրավ է, որ ռուսերենի քերականության մեջ ընդունված է աորիստը սերել ինֆինիտիվի հիմքից: Սակայն, ինչպես հայտնի է, ինֆինիտիվը ավելի ուշ է առաջացել, քան աորիստը և ավելի ճիշտ է ինֆինիտիվը բխեցնել աորիստի հիմքից և ոչ թե հակառակը<sup>14</sup>:

Վերոհիշյալ հիմքի հետ է կապված, կարծում ենք, ինֆինիտիվի միջին սեռի նշանակությունը: Ումանք այդ իմաստը կապում են նաև հանգույցի հետ: Այսպես, Յու. Գիպերտը հանգույցի իմաստը համարում է այսպեսի (so-sein) և այստեղ-այնտեղի գոյության (da-sein) իմաստ<sup>15</sup>: Սա առաջին հերթին վերաբերում է այնպիսի վիճահարույց կառույցի, ինչպիսին է ռուսերենի Земля пахать կառույցը, որտեղ ինֆինիտիվի խնդիրը դրված է ուղղական հոլովով: Գիպերտը ենթադրում է, որ նախկինում այս կառույցը եղել է Земля есть пахать, որին կրավորականություն է հաղորդել հանգույցը, քանի որ, ըստ նրա, հանգույցը պարունակում է հավանականության իմաստ: Այսպես, վերոհիշյալ նախադասությունը կարելի է հասկանալ հետևյալ կերպ՝ «սա այն հողն է, որը պետք է վարել» կամ «վարելու է»:

Այս կառույցին անդրադարձել է նաև ռուս լեզվաբան Յու. Ստեպանովը, որը նրա կրավորականությունը բացատրում է որպես նախնական այլ կառույցների բաղադրության (կոնստամինացիա) արդյունք, որից էլ հետևում է, որ պարտավորվածության իմաստը ոչ թե պատկանում է ստորոգական բառին, այլ ողջ կառույցին<sup>16</sup>: Ըստ նրա՝ այստեղ ինֆինիտիվը նորմալ չէ, քանի որ այն կրավորականի փոխարեն ներգործական է: Սակայն նա ավելացնում է նաև, որ սլավոնական լեզուներին հատուկ չէ կրավորական ինֆինիտիվը: Ժամանակակից ռուսերենում այն ունի իրեն հատուկ ցուցիչը՝ -ся: Սակայն այս դեպքում անհրաժեշտ է ենթակայի շնչավոր լինելը<sup>17</sup>:

Մեր կարծիքով՝ ինֆինիտիվի միջին սեռի իմաստը կապված է նաև ինֆինիտիվի հիմքի հետ, որն ունի արդեն վիճակի իմաստ, որն էլ միջին սեռի բուն բովանդակությունն է:

Ինչպես Ա. Մեյեն է նկատում, սլավոնական լեզուների ինֆինիտիվի ցուցիչ *ti* -ն երբեք անմիջականորեն չի կցվում ներկայի հիմքին, այն կցվում է կա՛մ անմիջապես արմատին, կա՛մ ձևակազմիչ տարրերին՝ կազմելով -*ati*, -*ěti*, -*iti*, -*n(ti)* վերջավորությունները: -*ěti*- ի -*ě*- ն, հավանաբար, աորիստի ձև է, և արտահայտում է վիճակի իմաստ: Բացի այդ՝ *ati*, -*ěti*, -*iti* տարրերը հանդես են գալիս բայական բոլոր ձևերում բացի ներկա ժամանակաձևից, այդ թվում՝ աորիստում: -*n(ti)* -ով ինֆինիտիվները, ի տարբերություն նախորդ տարրերի, պարտադիր չեն ինֆինիտիվի, աորիստի,

<sup>14</sup> Зинин. П. С. Кузнецов. Очерки по морфологии прославянского языка. М., 1961, с. 104.

<sup>15</sup> J. G i p p e r t. Das Nominativ-Objekt des Infinitivs, Die Slawischen Sprachen, № 4, 1983, S. 19.

<sup>16</sup> Ю. С. Степанов. Герундивы и имена действия в древнейшем строе индоевропейского предложения. – «Вопросы языкознания», 1985, № 6, с. 18.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 19:

բայաձևականի ձևերում, քանի որ -n(ti -ով ինֆինիտիվ ձևերին համապատասխանում են արմատական աորիստի և անցյալի բայաձևականի ձևերը: Այդ մասին են վկայում առնվազն հունարենի տվյալները<sup>18</sup>:

Ըստ Կ. Կրասուխինի՝ ռուսերենի, սանսկրիտի, լիտվաներենի այն ինֆինիտիվները, որոնք տրական հոլովին են հանգում և ցույց են տալիս նպատակ, ունեն վիճակի ու եղանակային իմաստ և մոտ են միջին սեռին: Ընդ որում՝ այստեղ իր դերն է խաղում նաև, այսպես կոչված, օկսիտոնը (կամ ածանցի վրա ընկնող շեշտը): Այս ինֆինիտիվները արտահայտում են նաև եղանակային (մոդալ) իմաստ: Ըստ նրա՝ ակտիվ իմաստ ունեն միայն այն ինֆինիտիվները, որոնք հանգում են ներգոյական հոլովին, արտահայտում են ռեալ իրականության իմաստ, և շեշտն ընկնում է արմատի վրա<sup>19</sup>: Նրա տեսությունը չի հակասում հայերենի տվյալներին, քանի որ հայերենի ինֆինիտիվը նույնպես հանգելով տրականին՝ կարող է և՛ նպատակի, և՛ անհրաժեշտության իմաստ ունենալ: Օրինակներ՝

Գիրքը կարդալու է:

Այստեղ աշխատանք կա անելու:

Ինֆինիտիվի միջին սեռի իմաստը առկա էր նաև ռուսերենի այնպիսի կառույցներում, ինչպիսիք էին ինֆինիտիվի հետ ուղղական հոլովով դրված իզական սեռի գոյականների գործածությունը ուղիղ խնդրի պաշտոնում, ինչպես՝ *Да к тем делом дияку рука своя приложити*<sup>20</sup>. Դա հատուկ է հին ռուսերենի հյուսիս-արևմտյան տարածքների գրական հուշարձաններին: Մոսկովյան հուշարձաններում այն գործածվել է մինչև XVIII դ. սկիզբը<sup>21</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս կառույցը հիմնականում գործածվում է անհրաժեշտություն, հարկադրանքի, հրաման արտահայտելու համար, Վ. Բվանովը ենթադրում է, որ այն նախապես գործածվել է *надо, нужно* բայերով անդեմ նախադասություններում, իսկ ավելի շուտ ինֆինիտիվն ընդհանրապես բացակայել է<sup>22</sup>:

Ի տարբերություն հայերենի՝ հին ռուսերենում կա նաև հրամայական ինֆինիտիվ, որի գործածության ոլորտը նեղացել է ժամանակակից ռուսերենում: Լիովին անհետացել է նաև կատարյալի արգելական ինֆինիտիվը: Այսպես կոչված պատմական ինֆինիտիվը, որը նույնպես առկա է հին ռուսերենում, ծագում է ինֆինիտիվի հրամայական գործածությունից: Մովորաբար ենթական դրվում է երրորդ դեմքով: Ինֆինիտիվի այս կոնյունկտիվ-հրամայականի գործածությունը զարգացել է ինֆինիտիվի նպատակային-հետևանքային գործածությունից, այլ կերպ՝ տրականին հանգող իմաստից: Պատմական ինֆինիտիվը գործածվում է պատմվածքներում

<sup>18</sup> А. М е й е. Общеславянский язык. М., 1951, с. 194–198.

<sup>19</sup> К. Г. Красухин. Аспекты индоевропейской реконструкции. Акцентология. Морфология. Синтаксис. М., 2004, с. 309–310.

<sup>20</sup> Л. А. Булаховский. Исторический комментарий к русскому литературному языку. Киев, 1950, с. 292–294. Հմմտ. М. А. Габинский. Նշվ. աշխ., էջ 188:

<sup>21</sup> В. В. Иванов. Նշվ. աշխ., էջ 429–430:

<sup>22</sup> Նույն տեղում:

(նկարագրություններում), որոնք բաղկացած են առանձին գործողությունների շարքից<sup>23</sup>:

Ռուսերենում առկա էր նաև ինֆինիտիվի գործածություն անշաղկապ պայմանի երկրորդական նախադասություններում, որը ենթադրաբար բխեցվում է ինֆինիտիվի հրամայական գործածությունից<sup>24</sup>:

Երկու լեզուներում էլ ինֆինիտիվը ժամանակի ընթացքում կրել է որոշակի փոփոխություններ:

Հայերենի անորոշի ձևաբանական փոփոխություններից կարելի է հիշատակել անցյալ կատարյալի հիմքից կազմված անորոշ դերբայը՝ խցել զանկանջսն ... ոչ ուրեք լուել (փխ. լսել) զբանն Տեառն<sup>25</sup>:

Ռուսերենի ինֆինիտիվը ժամանակի ընթացքում սերտաճում է սուպինի հետ, որի հետևանքով պահպանվում են երկու ձևն էլ՝ առանց գործառական տարբերակման՝ *идти, писать*:

Վերադառնալով հայերենին՝ նշենք, որ եթե նրա ձևաբանական փոփոխությունները տարածում չեն գտել, ապա նույնը չի կարելի ասել նրա կիրառական միտումների մասին:

Ընդհանուր առմամբ միջին հայերենում անորոշի գործառույթները որոշակիորեն նեղանում են: Այսպես՝ ի տարբերություն գրաբարի՝ այստեղ առկա են հետևյալ միտումները՝

1. Պարտ է, պիտոյ է, պատեհ է, արժան է + անորոշ դերբայ տրականով ենթակայի հետ գրաբարյան կառույցը միջին հայերենում երբեմն վերածվում է ենթակա երկրորդական նախադասության, հատկապես միադիմի բայ + անորոշ դերբայ + տրականով ենթակա երկկազմ նախադասություններում, որտեղ միադիմի բայը հանդես է եկել անկախ շարահյուսական գործառույթամբ, որպես ինքնուրույն ստորոցալ<sup>26</sup>: Օրինակներ՝

Եւ պատեհ է, որ յիբ հայրենի երկրէն զէդ եղբար մի կէս բաժին տան իր աժեօք ընդ պռոյզն<sup>27</sup>:

Բայց զգողն արժան է, որ ամէն երկրկալ խրատել կարէ...<sup>28</sup>

2. Կամքի և ցանկության՝ ուզենալ, կամիլ, թողուլ, հրամայել, թոյլ տալ և իմացական բայերի հետ անորոշ դերբայ գրաբարյան կառույցը միջին հայերենում վերածվում է խնդիր երկրորդական նախադասության<sup>29</sup>: Օրինակներ՝

Կու հրամայէ արեւնքս, որ բնաւ վարդապետ վարձ չառնու վասն գրոց կարդալոյ կամ այլ գիտութեան եկեղեցոյ ուսմանց...<sup>30</sup>

<sup>23</sup> K. B r u g m a n n. Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen. Berlin–Leipzig, 1933, S. 605; K. B r u g m a n n, B. D e l b r ü c k. Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. 4, /Syntax von B. Delbrück/, Teil 2. Strassburg, 1897, S. 457–459.

<sup>24</sup> K. B r u g m a n n, B. D e l b r ü c k. Նշվ. աշխ., էջ 474–475:

<sup>25</sup> Լ. Ս. Հ ն վ ս ե փ յ ա ն. ՄԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, էջ 78:

<sup>26</sup> Պ. Կ. Վ ա թ ղ ա պ ե տ յ ա ն. Շարահյուսություն, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 138, 193:

<sup>27</sup> Ս մ բ ա տ Ս պ ա թ ա պ ե տ. Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 8:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>29</sup> Պ. Կ. Վ ա թ ղ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 209:

<sup>30</sup> Ս մ բ ա տ Ս պ ա թ ա պ ե տ. նշվ. աշխ., էջ 76:

Գիտացիր, որ լեզուին բնութիւնն տաք և չոր է<sup>31</sup>:

Անորոշ դերբայի կիրառական առանձնահատկություններից է նաև միջին հայերենի շրջանում ձևավորված՝ կամիմ բայով և անորոշ դերբայով բաղադրյալ ապառնի ժամանակաձևը, որից հիշատակարաններում վկայված են հետևյալ օրինակները՝ Վայ մեղաւորիս Յոհանայ, թե ինչ կամիմ լինել յանքուն որդանցն, թուղթս կոտորեցաւ և կամիմ հեղձնուլ: Նշված օրինակներում կամիմ բայը կորցրել է իր բայական իմաստը և ձեռք է բերել միայն ապառնի ժամանակ կազմելու ձևական նշանակություն՝ օժանդակ բայի արժեք, իսկ բուն գործողության իմաստն արտահայտվում է անորոշ դերբայով: Անորոշ դերբայի այս կիրառությունը, սակայն, հետագա ծավալում չի ստանում և հանդիպում է միայն միջին հայերենի որոշ բնագրերում<sup>32</sup>:

Համանման զարգացում է ապրում նաև ռուսերենի ապառնի ժամանակաձևը՝ *хочю + ինֆինիտիվ կառույցով*, որն ավանդվել է դեռևս հին ռուսերենում՝ նախապէս պահպանելով իր եղանակային իմաստը<sup>33</sup>:

Եղանակավորիչ բայերի կիրառությունը ապառնի ժամակաձևերի կազմություններում ընդհանուր տիպաբանական արժեք ունի ու հատուկ է նաև գերմանական լեզուներին<sup>34</sup>:

3. Ասացական բայերի հետ անորոշ դերբայ գրաբարյան կառույցը միջին հայերենում վերածվում է թէ շաղկապով երկրորդական նախադասության<sup>35</sup>: Օրինակ՝

Մատային ասէ, թէ ձմեռն լինի կամ օդն ցուրտ.....<sup>36</sup>

Փաստորեն, այն կառույցներում, որտեղ ինֆինիտիվի և դիմավոր բայի ենթակաները տարբեր են և նախկինում արտահայտվել են բացարձակ կառույցների միջոցով, ինֆինիտիվը վերածվում է դիմավոր բայի: Ինչպէս նկատում է Պ. Վարդապետյանը, միջին հայերենին բնորոշը, կանոնականը սեռական-տրականով ենթակայով կառույցների բացակայությունն է<sup>37</sup>:

Բացարձակ կառույցների անորոշի վերածումը դիմավոր ձևերի նույնպէս ունի ընդհանուր տիպաբանական արժեք, քանի որ համանման զարգացում տեսնում ենք նաև այն լեզուներում, որոնք ունեն բաղկանյան ինֆինիտիվ, դիմավոր ինֆինիտիվ կամ AcI, DcI, NcI կառույցներ:

Այսինքն՝ ինֆինիտիվը հին հայերենում այլևս չուներ իր նախնական կոնկրետությունը, և միջին հայերենում առկա է ավելի խոսակցական, կոնկրետ ոճ, որտեղ գրաբարի ինֆինիտիվի վերացականությունը աստիճանաբար վերափոխվում է երկրորդական նախադասության: Մա վերաբերում է

<sup>31</sup> Ա մ ի ր դ ն վ լ ա թ Ա մ ա ս ի ա ց ի. Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 34: Պ. Կ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 209:

<sup>32</sup> Լ. Ս. Հ ն վ ս ե փ յ ա ն. նշվ. աշխ., էջ 78:

<sup>33</sup> К. В. Горшкова, Г. А. Хабургаев. Историческая грамматика русского языка. М., 1981, с. 293.

<sup>34</sup> Հմմտ. Э. П р о к о ш. Сравнительная грамматика германских языков. М., 1954, с. 220.

<sup>35</sup> Պ. Կ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 210:

<sup>36</sup> Մ ի ի թ ա ր Հ ե ր ա ց ի. Ջերմանց Միսիթարութիւն.– Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա: Գրաբար և միջին հայերեն, Երևան, 1987, էջ 244:

<sup>37</sup> Պ. Կ. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 158:

նան պարագայական իմաստներին՝ ժամանակի, տեղի, նպատակի: Ինֆինիտիվն իր հերթին քերականացվում է՝ ձեռք բերելով ավելի վերացական իմաստ:

4. Մյուս կողմից անորոշի նախորդով գործածություններն աստիճանաբար վերանում են, իրենց տեղը զիջելով երկրորդական նախադասություններին, թեև ժամանակային առումով միջին հայերենի հետ համընկնող ժամանակաշրջանում դեռևս պահպանվում են նպատակ արտահայտող ինֆինիտիվով կառույցները, օրինակ՝

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ի պահել ինձ զպատուիրանս քո<sup>38</sup>:

Ստորոգելիական ածականների հետ անորոշ դերբայը նույնպես առանց նախորդի է հանդես գալիս, բացառությամբ այն դեպքերի, երբ այն նպատակի կամ հետևանքի իմաստ է արտահայտում: Օրինակ՝ Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել<sup>39</sup>: Նույնը վերաբերում է նաև ժամանակակից հայերենին, որտեղ արդեն այդ իմաստն արտահայտվում է տրական հոլովով դրված անորոշով՝ պատրաստ եմ գրելու:

Սակայն ի + անորոշ դերբայ հին հայերեն կառույցը ժամանակի երկրորդական նախադասության նշանակությամբ արդեն միջին հայերենում չի պահպանվել: Այն փոխարինվել է շաղկապով երկրորդական նախադասությամբ:

Ուշագրավ է, որ հին հայերենում շարժման բայերի հետ հիմնականում հանդես է գալիս աննախդիր ինֆինիտիվը, իսկ միջին և ժամանակակից հայերենում դրան փոխարինում է անորոշի սեռական-տրական հոլովաձևը: Օրինակներ՝

....և ինքն գնաց ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զգօրս Հայոց, զԿրաց և զկողմանցն Կեսարու...<sup>40</sup>

Աղուոր մի ծարութենէն  
Նստեր է ջրին վրայ.  
Կտրիճ մի անոր սիրուն,  
Գնաց ի դէմ խօսելու...<sup>41</sup>

... իսկ ես կգնամ մի քիչ հանգստանալու<sup>42</sup>:

Այլ կերպ ասած՝ երբ տվյալ ձևը սպառում է իր բովանդակությունը, առաջանում է նոր ձև՝ այդ բովանդակությունն արտահայտելու համար: Հայերենի համար այդպիսի ձև է հոլովված անորոշը:

Շաղկապով երկրորդական նախադասությունը մասամբ փոխարինում է նաև դիմավոր բայից կախման մեջ գտնվող անորոշ դերբային: Պիտի + անորոշ դերբայ կառույցը փոխարինվում է երկրորդական

<sup>38</sup> Մ մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ. նշվ. աշխ., էջ 3:

<sup>39</sup> Ե դ ի շ է. նշվ. աշխ., էջ 73:

<sup>40</sup> Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. նշվ. աշխ., էջ 10:

<sup>41</sup> Հայրեններ. Քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 639:

<sup>42</sup> Ն ա ր - Դ ո ս. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1968, էջ 259:

նախադասությամբ՝ որ շաղկապով կամ առանց դրա: Օրինակ՝ պիտի որ առնու, պիտի լինի և այլն<sup>43</sup>:

5. Մյուս կողմից, միջին հայերենում ավելի գործածական են դառնում գրաբարին հատուկ ինֆինիտիվի սեռական և գործիական հոլովով դրված ձևերը: Այսպես՝ Բագարատ ասէ, թէ շատ տապելովն և խոնճելովն՝ հոգւոյն տաքութիւնն իւր չափէն անցնի.....<sup>44</sup>

Այսինքն՝ անորոշը աստիճանաբար քերականացվում է նաև մեկ այլ գործառույթում, այն է՝ գերունդիվի, որտեղ տեղի է ունենում հակառակ գործընթացը՝ վերացականից կոնկրետի անցումը, սակայն արդեն քերականական այլ ձևով:

Ժամանակակից արևելահայերենում բայերը հիմնականում հանդես են գալիս չհոլովված անորոշ դերբայով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ունեն նպատակի կամ հետևանքի իմաստ: Օրինակներ՝

հարկադրվել աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)
մտադրվել աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)
նպատակադրվել աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)
պատրաստվել աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)
պարտավորվել աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)
ստիպվել /ստիպված լինել/ աշխատելու/ աշխատել	(ինֆ. տրական հոլ., ինֆ. անփոփոխ)

Այս կառույցները հանդես են գալիս հատկապես նույնաենթակայնության դեպքում: Ինֆինիտիվի նպատակի իմաստը միևնույն ենթակայի դեպքում ժամանակակից ռուսերենում սկսում է արտահայտվել *чтобы* + ինֆինիտիվ կառույցով: Այս կառույցը որոշակի ընդհանրություններ ունի հին հունարենի ինֆինիտիվի հետ, որը նույնպես հանդես է գալիս ինֆինիտիվի հետ՝ հետևանքի պարագայի իմաստ արտահայտելու համար<sup>45</sup>:

Զգացական բայերի դեպքում հայերենում հանդես է գալիս մի նոր դերբայական ձև, որը կոչվում է անկատար II դերբայ, որը նույնպես ծագում է ներգոյականի իմաստից: Այսպես՝

Ես տեսնում եմ քեզ գիրք կարդալիս:

Եթե ընդունենք *accusativus cum Infinitivo* կառույցների ծագման մասին այն վարկածը, որի համաձայն դրանք նույնպես բխում են ինֆինիտիվի ներգոյական իմաստից, ապա կարող ենք փաստել, որ այստեղ գործ ունենք միևնույն իմաստային զարգացման հետ<sup>46</sup>:

Ռուսերենում նույնպես ժամանակի ընթացքում անհետացան ինֆինիտիվը հայցականի և ուղղականի հետ կառույցները, որոնք արդյունք էին արևմտաեվրոպական լեզուների ազդեցության: Օրինակ՝

<sup>43</sup> Յո. Կոպուտ. Գիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևան, 2002, էջ 372:

<sup>44</sup> Մխիթար Հեթումցի. նշվ. աշխ., էջ 244:

<sup>45</sup> H. Hirt. Indogermanische Grammatik, Teil VII, Syntax II, Die Lehre vom einfachen und zusammengesetzten Satz. Heidelberg, 1937, S. 112.

<sup>46</sup> Հմմտ. K. Brugmann. նշվ. աշխ., էջ 604:

*Да и так достойну глаз твоих быть не верил и чины мнятся им быть сладки*<sup>47</sup>.

Ինչ վերաբերում է ինֆինիտիվը տրականի հետ կառույցներին, ապա երկու լեզուներում էլ դրանք պահպանվում են, հատկապես միադիմի բայերի հետ, թեև հայերենի զարգացման միջին շրջանում դրանք փոխարինվում են երկրորդական նախադասություններով, սակայն ժամանակակից հայերենում դարձյալ վերականգնվում են: Այսպես՝ արևելահայերենում դրանք վերածվում են հարկադրական եղանակի ժամանակային մի ձևի՝ պիտի գնամ, իսկ արևմտահայերենում նույն ձևն ունի սահմանական եղանակի ապառնիի իմաստ՝ պիտի առնէ:

Ռուսերենում ժամանակի ընթացքում հնարանություն են դարձել նաև ինֆինիտիվով բացարձակ կառույցները, որոնց իմաստն այժմ արտահայտվում է *можно, могу, следует, надо, не следует, нельзя* բառերի միջոցով: Օրինակ՝ *им тое царские казны не красть, и соболей своих худих, и иные мягкие руляды в казню не приносить и не обменивать*<sup>48</sup>.

Ի տարբերություն ռուսերենի՝ հայերենում անորոշը գոյականացվում է: Թեև ինչպես նկատում է Ֆ. Բուսլանը, որպես ենթակա հանդես եկող ինֆինիտիվը երբեմն համաձայնեցվում է չեզոք սեռով դրված գոյականների, դերանունների և բայածականների հետ: Այսպես՝ *...которому в бою не уступить великой частью озарило б мои молодые годы...*<sup>49</sup>

Բացի այդ՝ հնագույն հեղինակները ինֆինիտիվն ու գոյականը հաճախ միացրել են միմյանց և «և» շաղկապով որպես նախադասության նույն անդամներ՝ *...любят все (домашние слуги) властвовать и корысть*<sup>50</sup>. Ավելի ուշ չեն հանդիպում նման կառույցներ<sup>51</sup>:

Ժամանակի ընթացքում դադարում է գործել ինֆինիտիվը նաև անշաղկապ պայմանի երկրորդական նախադասություններում՝ *...а меня вам камением побить, и мне -де никою кровию своею не избавить..., и аяпашнիի իմաստով՝ ...а пойти ми с их рук, а дому мы дать...* Նույն բախտին է արժանանում նաև *Говорить было կառույցը, որի վերապրուկներն են դեռևս ժամանակակից ռուսերենում գոյություն ունեցող *слыхать было, видеть было* կառույցները կամ էլ *Как будет мне с тобой разлуку перенести**<sup>52</sup>.

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ երկու լեզուներում առկա են ինֆինիտիվի զարգացման ուղիների որոշակի ընդհանրություններ և տարբերություններ, որոնք պայմանավորված են ինչպես դրանց կազմությամբ, այնպես էլ գործածության շրջանակով:

<sup>47</sup> Л. А. Булаховский. Նշվ. աշխ., էջ 296–301, *հմմտ.* М. А. Габинский. Նշվ. աշխ., էջ 189:

<sup>48</sup> Л. А. Булаховский. Նշվ. աշխ., էջ 298, *հմմտ.* М. А. Габинский. Նշվ. աշխ., էջ 188:

<sup>49</sup> Ф. И. Буславев. Նշվ. աշխ., էջ 373:

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> Նույն տեղում:

<sup>52</sup> Л. А. Булаховский. Նշվ. աշխ., էջ 296–299, *հմմտ.* М. А. Габинский. Նշվ. աշխ., էջ 188–189:

ТИПОЛОГИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ АРМЯНСКОГО  
ИНФИНИТИВА В СРАВНЕНИИ С РУССКИМ

АРМИНЕ ГАГИНЯН

## Резюме

Инфинитивы армянского и русского языков этимологически восходят к разным показателям, однако с типологической точки зрения выявляют общие черты как в синхронии, так и в диахронии. Сравнительный анализ развития инфинитива в армянском и русском указывает на определенные сходства и различия в направлениях развития обоих языков. Так, если инфинитив армянского языка имеет предложные и беспредложные варианты, то в отличие от него древнерусский имеет другую безличную форму – супин, который в основном употребляется с глаголами движения, в особенности для выражения значения цели, и близок к армянскому беспредложному инфинитиву. В отличие от армянской неопределенной формы глагола, восходящей к основе настоящего времени, инфинитив русского языка возник от основы аориста. Неопределенная форма глагола в русском языке не может субстантивироваться и более не склоняется. Однако вместо этого инфинитив имеет такие функции, как, например, повелительная, историческая функции. В отличие от армянского, где есть инфинитив с конструкциями в винительном, дательном и родительном падежах, в древнерусском отсутствуют конструкции в родительном падеже. Их заменяют конструкции в именительном падеже. Но если для русского характерна конструкция инфинитива в дательном падеже, то этого нельзя сказать о конструкциях *AcI* и *NcI*. В дальнейшем в обоих языках сохраняются конструкции в дательном падеже. Если в современном армянском значение цели в случае одного и того же подлежащего начинает выражаться посредством склоняемого инфинитива, то в русском оно выражается при помощи конструкции *чтобы + конструкция инфинитива*.

THE TYPOLOGICAL CHANGES OF THE ARMENIAN INFINITIVE  
IN COMPARISON WITH RUSSIAN INFINITIVE

ARMINE GAGINYAN

## Summary

The markers of the Armenian and Russian infinitives are originally different, but from the typological point of view there appear certain common peculiarities for the synchronic and diachronic matter. By comparing the development of infinitive in Armenian and Russian we can speak about certain differences and similarities of development of both languages. Armenian infinitive has two types – with and without preposition, whereas Old Russian has another impersonal verb form – supine, which is used for expression of the proposal meaning particularly with

---

motion verbs and can be equated with the Armenian infinitive without preposition. In contrast to the Armenian infinitive, which originates from the present stem, Russian infinitive originated from the aorist stem. Russian infinitive can not be nominalized and declined like Armenian infinitive, but instead it has imperative and historical functions. In contrast to Old Armenian, where AcI, DcI, GcI are present, in Old Russian GcI is absent and instead NcI is present. During the time DcI is preserved in both languages. In Modern Armenian the proposal meaning begins to be expressed with the declined infinitive in case of the same subject, in Russian it is expressed with the construction *чтобы + infinitive*.